ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐՀԱՏՅԱՆ ՆԱՒՐԱ ԱԼԲԵՐՏԻ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների թեկնածու **Լևոն Կարոյի Սարգսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր **Մելս Պարգևի Մկրտումյան**
	հոգեբանական գիտությունների թեկնածու **Լիդա Ռազմիկի Արամյան**
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. փետրվարի 24-ին ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 24.12.2025թ.:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Գամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հասարակության սոցիալական կյանքում ժամանակակից երիտասարդ ընտանիքները, գտնվելով անցումային փուլում, հաճախ հանդիպում են ավանդական և ժամանակակից արժեքների բախմանը, ինչն առաջացնում է դերային անհամապատասխանություններ: Մեզանում, որտեղ ընտանիքը համարվում է ազգային և մշակութային արժեքների պահպանման հիմնական կրողը, նման բախումները կարող են հանգեցնել ընտանեկան կայունության խաթարման: Երիտասարդ զույգերը, փորձելով հաշվի առնել ծնողական ընտանիքի ավանդական մոդելները, միաժամանակ ձգտում են ընդունել ժամանակակից մոտեցումներ: Այս գործընթացը հաճախ ուղեկցվում է ներքին և արտաքին լարվածություններով, որոնք խորացնում են ամուսնական կոնֆլիկտները:

Ավելին, Հայաստանում, որտեղ ավանդույթները խորապես արմատավորված են, սակայն գլոբալիզացիայի ազդեցությունն ավելի ու ավելի զգալի է դառնում, ընտանիքի դերի վերաիմաստավորումը դառնում է անհրաժեշտություն: Երիտասարդ ընտանիքներում կոնֆլիկտների կառավարման արդյունավետ ռազմավարությունների բացակայությունը կարող է հանգեցնել ամուսնալուծությունների թվի աճի, ինչը բացասաբար կանդրադառնա ինչպես անհատների, այնպես էլ հասարակության վրա: Կոնֆլիկտների պատճառների խորը վերլուծությունը թույլ կտա բացահայտել դրանց արմատները, որոնք հաճախ կապված են ծնողական ընտանիքից փոխանցված արժեքների, վարքային մոդելների և սպասումների հետ:

Ինչպես հայտնի է, անձի ձևավորումը և զարգացումը տեղի է ունենում ծնողական ընտանիքում: Ծնողական ընտանիքը կարող է դիտարկվել որպես սոցիալական խումբ, որն օժտված է որոշակի արժեքային համակարգով, հարաբերությունների մշակույթով, կյանքի սցենարով, որոնք ձևավորում են անձի կառուցվածքը, մոտիվացիան և սոցիալական հարաբերությունների մոդելը: Ընտանեկան հոգեբանության բնագավառում կուտակվել են հետաքրքիր հետազոտություններ երեխաների սոցիալականացման գործընթացում ծնողների դերի նշանակության մասին: Մասնավորապես, մենք կարող ենք առանձնացնել Է. Էրիկսոնի, Դ. Վիննիկոտի, Ֆ. Ռիմանի և այլոց աշխատությունները: Հատկապես ուշագրավ են հետազոտությունները երեխաների և մայրերի փոխհարաբերությունների յուրահատկությունների վերաբերյալ (Դ.Կ. Պատտերսոն, Ա. Ադլեր, Զ. Ֆրոյդ, Է. Բեռն): Ուշադրության են արժանի

նաև դեռահասների հարաբերությունները ծնողների հետ, հատկապես այդ հարաբերությունների հուզական կողմը (Ա.Ե. Լիչկո, Ի.Ս. Կոն, Վ.Ս. Մուխինա): Սակայն, դրա հետ մեկտեղ, շատ քիչ են այն հետազոտությունները, որոնք վերլուծության առարկա են դարձրել ծնողների ազդեցության դերը տղամարդկանց և կանանց ամուսնական դերերի ձևավորման վրա: Ամուսնական դերերը, որոնք պետք է յուրացնեն երիտասարդ կանայք և տղամարդիկ, միանշանակ կարող են դիտարկվել որպես իրենց ծնողների դերերի արտացոլանք: Սոցիալական հոգեբանության բնագավառում, ցավոք, շատ քիչ են ծնողական կերպարների ազդեցության գործոնի հետազոտությունները՝ կապված երիտասարդների ամուսնական դերերի ձևավորման հետ: Ծնողական կերպարները հաճախ որոշիչ տեղ ունեն երիտասարդների ամուսնական կյանքում և մասնավորապես, կոնֆլիկտներում:

Հետազոտության նպատակը՝ ծնողական կերպարների ազդեցության բացահայտումն է երիտասարդ ամուսինների կոնֆլիկտներում:

Նպատակից ելնելով սահմանվել են հետևյալ **խնդիրները՝**

- Վերլուծել ամուսնությունը և ընտանիքը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, «ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունների էությունը՝ որպես սոցիալական կառույցների և հոգեբանական փոխհարաբերությունների համակարգ:
- Պարզաբանել ընտանիքի գործառույթները (հոգեբանական ասպեկտները) և ամուսնական ճգնաժամերի տարբեր մակարդակները, ընտանեկան ճգնաժամերի նորմատիվ և ախտաբանական դրսևորումները՝ կապված սոցիալական ակնկալիքների և անհատական հարմարվողականության հետ:
- Մեկնաբանել ամուսնական փոխհարաբերությունների զարգացման ճգնաժամային շրջանների հոգեբանական առանձնահատկությունները:
- Որոշել ընտանեկան ապահարմարման հոգեբանական գործոնները:
- Բացահայտել երիտասարդ ընտանիքներում ամուսնական կոնֆլիկտների հիմնական սոցիալ-հոգեբանական պատճառները:
- Համեմատել և գնահատել կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային խմբերի արդյունքները ու ծնողական ընտանիքի վարքային մոդելների ազդեցությունը երիտասարդ ամուսինների հարաբերությունների վրա:
- Վերլուծել ծնողական դերերի նույնականացման, ամուսնական բավարարվածության և կոնֆլիկտների միջև ստացված հարաբերակցային տվյալները:

Հետազոտության վարկածը: ենթադրվում է, որ երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները պայմանավորվում են ծնողների ամուսնական դերերի հետ նույնականացումով և կրում են խմբային և ոչ անհատական բնույթ:

1. Ամուսինների կոնֆլիկտային հարաբերություններն անխուսափելի են, եթե դրանք բխում են ծնողների կոնֆլիկտային ամուսնական դերերին նույնականացումից:

2. Երիտասարդ ամուսինների ամուսնության բավարարվածությունը պայմանավորված է իրենց ծնողների ամուսնության բավարարվածության աստիճանով:

Հետազոտության օբյեկտը՝ երիտասարդ ամուսինների (մինչև 5 տարի ամուսնության ժամանակահատված) կոնֆլիկտային հարաբերություններն են:

Հետազոտության առարկան է՝ երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունների պայմանավորվածությունը ծնողական ընտանիքների վարքային մոդելների առանձնահատկություններով (կոնֆլիկտային վարքի նախահակվածություն, դերային սպասելիքներ և ծնողական ընտանիքների վարքային հավակնություններ, ամուսնությունից բավարարվածություն):

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել ընտանիքի, որպես սոցիալական ինստիտուտի՝ Յու. Ալեշինայի, Ս.Ի. Գոլոդի, Է.Գ. Էյդեմիլլերի, Ս.Վ. Կովալյովի, Ն.Ա. Կովալի, Ա.Գ. Լիդերսի դրույթները և հայեցակարգը, ընտանեկան կյանքի բավարարվածության, ամուսնական դերերի սոցիալ-հոգեբանական՝ Վ.Վ. Ստոլինի, Տ.Լ. Ռոմանովայի, Գ.Փ. Բուտենկոյի տեսությունները, ընտանիքի, որպես սոցիալական ինստիտուտի զարգացման ուղությունը Ի.Յա. Բախովենի և Զ.Ֆ. Մակլեննանի տեսություններում, Է. Դյուրկհեյմի՝ ընտանիքի ֆունկցիոնալ ուսումնասիրության տեսությունը: Մեթոդաբանական ուսումնասիրության հիմքը կազմել են նաև Ե.Վ. Զմանովսկայայի ընտանիքի կառուցվածքային դինամիկ հայեցակարգը, Ա.Յա. Վարգայի, Է.Գ. Էյդեմիլլերի և Վ. Յուստիցկիսի մոտեցումները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել է գիտական գրականության վերլուծության, համադրման մեթոդը: Փորձարարական մասում օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները՝

- Կ. Թոմասի՝ կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի նախահակվածության ախտորոշման թեստը:

- Վ. Ստոլինի, Լ. Ռոմանովի և Գ. Բուտենկոյի՝ ամուսնությունից բավարարվածության մակարդակի թեստ-հարցարանը:
- Յու. Ալեշինայի Լ. Գոզմանի, Ե. Դուբովսկայայի՝ դիրքորոշումների բացահայտումը ամուսնական զույգում:
- Յու. Ալեշինայի, Լ. Գոզմանի և Ե. Դուբովսկայայի՝ ընտանեկան դերերի բաշխումն ընտանիքում հարցարանը:
- Ա. Վոլկովայի՝ դերային սպասելիքները և հավակնությունները ամուսնության մեջ հարցարանը:
- Ե. Շեֆերի և Ռ. Բելլի՝ ընտանեկան կյանքի տարբեր կողմերի նկատմամբ ծնողների դիրքորոշումների մեթոդիկան PARI (parental attitude research instrument):
- Յու. Ալեշինայի և Լ. Գոզմանի՝ կոնֆլիկտային իրադրություններում ամուսինների փոխազդեցության բնույթը հարցարանը:

Հետազոտության գիտական նորույթը նրանում է, որ կատարվել է երիտասարդ ընտանիքնեի կոնֆլիկտային հարաբերությունների պայմանավորվածության վերլուծություն՝ ծնողական ամուսնական մոդելների ազդեցության համատեքստում, դուրս են բերվել կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկային երիտասարդ ընտանիքների հակազդումների տեսակները կոնֆլիկտային իրադրություններում, բացահայտվել է կոնֆլիկտային հարաբերություններին արձագանքելու տեսակի կապը ամուսնությամբ բավարարվածության աստիճանի հետ:

Տեսական նշանակությունը: Մշակվել է ընտանիքի հոգեբանության բնագավառում երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունների հիմնախնդիրը, դրանց փոխկապակցվածությունը ծնողական ընտանիքների վարքային մոդելների հետ: Մշակվել է երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունների յուրացված բնույթը: Այս տեսանկյունից մեծ է աշխատանքի տեսական ներդրումը:

Կիրառական նշանակությունը պայմանավորվում է երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունների ախտորոշման մեթոդաբանական նոր հնարավորություններով և դրա հիման վրա կոնֆլիկտային վարքի կանխատեսման հնարավորինս բարձր աստիճանով: Ատենախոսության կիրառական նշանակությունը ընտանիքի հոգեբանության մեջ ամուսնական կոնֆլիկտների կանխորոշման նոր մոտեցումներում է, ինչը հնարավորություն կտա ամուսնական կոնֆլիկտային հարաբերությունների կանխարգելման նոր հնարավորությունների մշակման և հոգեբանական խորհրդատվության,

հոգեթերապիայի, ընտանիքի ուղղեկցման աշխատանքներում դրանց կիրարկման մեջ:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

- Երիտասարդ ամուսինների ամուսնությունից բավարարվածությունը պայմանավորվում է մի քանի գործոններով. ամուսնական դիրքորոշումների համապատասխանությամբ, դերային սպասելիքների և հավակնությունների համաչափությամբ, ամուսինների կոնֆլիկտային վարքում հակազդումների տեսակով, իրենց ծնողների ամուսնության բավարարվածության աստիճանով:
- Երիտասարդ ամուսինների հարաբերությունները ձևավորված են իրենց ծնողների կերպարների հետ նույնականության մեխանիզմի շնորհիվ, դրանով հենց ամուսնական հարաբերություններում կարելի է տեսնել նույնականացման և պրոյեկցիայի մեխանիզմների գործունեությունը:
- Երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները հաճախ պայմանավորվում են դերային սպասելիքների անհամապատասխանությամբ, տղամարդիկ կարևորում են սեռադերային կարծրատիպերը, կանայք՝ ազատ են կարծրատիպային հարաբերություններից:
- Կոնֆլիկտային ամուսնական հարաբերություններում տղամարդիկ հակված են տեսնել կնոջ մոտ մայրական վարք, իսկ կանայք ընդունում են այն դերային սպասելիքները, որոնք նրանց վերագրվում են կոնֆլիկտներից խուսափելու համար:
- Ընտանեկան կյանքի որակը, ամուսնական հարաբերությունները պայմանավորվում են կոնկրետ էթնոմշակութային ազդեցությամբ: Էթնոմշակույթը փոխանցվում է սերնդից սերունդ, հաղորդելով անհատական ամուսնական հարաբերություններին կարծրատիպային և խմբային բնույթ:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են հիմնախնդրին առնչվող աղբյուրների ընտրությամբ և վերլուծությամբ, հետազոտության տեսամեթոդական հիմքի ներկայացմամբ, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդական գործիքակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ և մեկնաբանմամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Կատարվել է գիտական աշխատանքների ծավալուն վերլուծություն (ընդհանուր 130 աղբյուր), ատենախոսության արդյունքներն արտացոլվել

են 10 գիտական հրապարակումներում՝ գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովում: Աշխատանքի առանձին դրույթներ ներկայացվել են Խ. Աբովյանի անվան ՀՄՊՀ ակադեմիկոս Մ. Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, գիտական վերլուծության երկու տեսական գլուխներից և ուսումնասիրության մեթոդաբանության մեկ գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսությունը ներառում է 14 աղյուսակ, 2 նկար և բաղկացած է 154 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունը ներառում է թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակը, վարկածը, նպատակից բխող խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության ընտրակազմը, մեթոդիկաները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ «**Ամուսնության և ընտանիքի զարգացման նկարագրությունը հասարակության պատմության ընթացքում»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Ընտանեկան հարաբերությունների սոցիալ-պատմական ակնարկ»** ենթագլխում ներկայացված են գիտական գրականության մեջ առկա ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների բազմաբնույթ սահմանումները և հայեցակարգերը: Ընդհանուր առմամբ դիցաբանական տեքստերն առավել հաճախ ուղղված են ոչ այնքան ընտանիքի, որքան զգայական սիրո հիմնախնդրին: Ընտանեկան հարաբերությունները մարդու և ընտանիքի պատմության մենտալ ռեֆլեքսիայի արդյունք են: Լ. Շնայդերի կարծիքով, ժամանակակից հոգեբանության մեջ առանձնացնում են ընտանիքի ինստիտուտի ուսումնասիրման հինգ ուղղություն. էվոլյուցիոն, գործառույթային, ծագումնաբանական, էմպիրիկ և գիտական:

Երկրորդ՝ **««Ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները որպես սոցիալ-հոգեբանական երևույթ»** ենթագլխում ներկայացված են ամուսնական հարաբերություններում առկա թույլատրվող և կարգավորվող հասարակական-պատմական հարաբերությունների ձևերը, սահմանումները, մոտեցումները և հիմնական հայեցակարգերը:

Ընտանիքն իրենից ներկայացնում է սոցիալական ինստիտուտ, որտեղ ամուսինների, ծնողների և երեխաների միջև գործում է փոխհարաբերությունների որոշակի համակարգ: Այն փոքր սոցիալական խումբ է, որի անդամները կապված են ամուսնական կամ հարազատական հարաբերություններով, ընդհանուր կենցաղով և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ: Ընտանիքն առաջին հերթին իրենից ներկայացնում է սոցիալական ինստիտուտ, որտեղ առկա են միջանձնային հաղորդակցություն, ինտիմ, գործընկերային կամ կոնֆլիկտային հարաբերություններ:

Երրորդ՝ **«Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործառույթները»** ենթագլխում վերլուծվում են ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ընտանեկան համակարգում առկա սոցիալ-հոգեբանական գործառույթները: Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ, ապահովում է սերունդների վերարտադրողականությունը և ժառանգականությունը, հանդիսանում բարոյական և վարքային մշակութային ստանդարտների կրող: Գիտական գրականության մեջ առանձնացվում են ընտանիքի գործառույթների հետևյալ տեսակները. գոյատևման ապահովում, ընտանիքի անդամների միմյանց մասին հոգալը, երեխաների դաստիարակությունը, ֆիզիկական, հուզական, սոցիալական և տնտեսական նախապայմանների ստեղծումը, միմյանց միջև նեղ հուզական կապի պահպանումը, միմյանց վարքի սոցիալական վերահսկողության իրացումը:

Երրորդ՝ **«Ամուսնական ճգնաժամերի տարբեր մակարդակները»** ենթագլխում վերլուծվում են անհատական, միկրոհամակարգային, մակրոհամակարգային և մեգահամակարգային ճգնաժամերի ու կոնֆլիկտների մակարդակները: Ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, անցնում է սոցիալ-հոգեբանական զարգացման որոշակի փուլերով: Սոցիալական զարգացման գործընթացն օրինաչափորեն իր մեջ է ներառում հուզական, ինչպես նաև կոնֆլիկտների և հարմարման անկման և վերելքի փուլեր: Այս փուլերից դուրս գործնականում անհնար է ընտանեկան ինստիտուտի գոյությունը: Ամուսնական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական ցանկացած վերլուծության նպատակով կարող են հստակեցվել նրանց առանձնահատկությունները գործունեության տարբեր ասպեկտներում՝ ինտիմ, դերային, միջանձնային, միկրո և մակրոսոցիալական:

Երկրորդ՝ «**Ընտանեկան ճգնաժամերի սոցիալ-հոգեբանական վերլուծությունը»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին՝ **«Ընտանեկան ճգնաժամեր, նորմեր և շեղումներ»** ենթագլխում ընտանեկան ճգնաժամերը մեկնաբանվում են որպես երիտասարդների ծնողական ընտանիքների հետ նույնականացման հետևանքով առաջացող կոնֆլիկտների արտացոլում, ինչը, հաճախ արդյունավետ կերպով չի գործում: Նորմատիվ ճգնաժամերը ամուսնական հարաբերությունների անբաժանելի մասն են: Ընտանեկան ճգնաժամերը չեն կարող մեկնաբանվել միայն դերերի տեսության սահմաններում: Կարևորվում է ընտանեկան հարաբերությունների ներքին հոգեբանական դինամիկան:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ **«Երիտասարդ ընտանիքներում ամուսնական կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական պատճառները»** ենթագլխում կարևորվում են մինչամուսնական հարաբերությունների փուլը, հասարակության մշակութային և էթնիկական առանձնահատկություններն ու ավանդույթները որպես ամուսնական կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական պատճառականություն:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ՝ **«Ամուսնական փոխհարաբերություններում ճգնաժամային շրջանների հոգեբանական առանձնահատկությունները»** ենթագլխում «ամուսնական ճգնաժամը» սահմանվում է որպես հարաբերությունների զարգացման որոշակի հանգուցային կետ, որի դեպքում փոխադարձ հարմարման նախկին մարտավարությունները կորցնում են իրենց արդյունավետությունները: Ամուսնական ճգնաժամը համառորեն պահանջում է հանգուցալուծում, ինչպես նաև ամուսնական փոխհարաբերությունների որոշակի վերանայում և սեռադերային նոր արդյունավետ վարքային մարտավարությունների ձևավորում:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ՝ **«Ամուսնական փոխհարաբերություններում ճգնաժամային շրջանների հոգեբանական առանձնահատկությունները»** ենթագլխում վերլուծվում են երիտասարդ ընտանիքում ճգնաժամերի դրսևորումները կոնֆլիկտների ձևով: Երիտասարդ ընտանիքներին հատուկ են ամուսնական կոնֆլիկտներում արտահայտվող հետևյալ ճգնաժամերը. լիդերության ճգնաժամ, պատասխանատվության ճգնաժամ, ծնողական ընտանիքների միջամտության ճգնաժամ, սեռական կյանքին հարմարման ճգնաժամ, տնտեսական ճգնաժամ և այլն: Ըստ էության, սրանք հիմնական խնդիրներն են, որոնք արտահայտված են երիտասարդ ընտանիքներում:

Ատենախոսության երկրորդ գլխի չորրորդ՝ **«Ընտանեկան ապահարմարման հոգեբանական պատճառները»** ենթագլխում

ամուսնական կոնֆլիկտները մեկնաբանվում են որպես մերձընտանեական բնույթի՝ պայմանավորված չլինելով նեղ ամուսնական անձնային հարաբերություններով: Եթե դերային պատկերացումները յուրացվում են փոքր տարիքից, ծնողական ընտանիքում, ապա դերային կոնֆլիկտները նույնպես իրենց բովանդակությամբ ծագում են մանկությունից, իսկ սերունդների պատկերացումները վերափոխվում միջանձնային ամուսնական կոնֆլիկտների:

Ատենախոսության երրորդ՝ «**Երիտասարդ ընտանիքների կոնֆլիկտների առանձնահատկությունների փորձարարական հետազոտություն և վերլուծություն»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության այս գլխի **«Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաների և ընտրանքի նկարագրությունը»** ենթագլխում ներկայացված են հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրանքը, մեթոդներն ու մեթոդիկաները: Հետազոտությունն անցկացվել է 2016-2020 թթ.: Ընտրանքը ներառել է 240 հոգի: Հետազոտվողներից 120 փորձարարական խումբ. 30 երիտասարդ ամուսնական զույգեր (20-30 տ.), որոնց ամուսնության ժամանակահատվածը կազմում է 3-5 տարի և որոնց մոտ արձանագրվում են կոնֆլիկտային հարաբերություններ, ունեն երեխաներ: 30 ամուսնական զույգերի ծնողները (52-65 տ.): Մյուս 120-ը՝ ստուգիչ խումբ, որոնցից 30 երիտասարդ ամուսինների ստուգիչ խումբ (20-30 տ.), առկա չեն կոնֆլիկտային հարաբերություններ, որոնք ևս ունեին երեխաներ, ինչպես նաև ստուգիչ խմբի տղամարդկանց հայրերը և կանանց մայրերը (30 տղամարդ և 30 կին՝ 60 հոգի): Կիրառվել է թեստավորում՝ Կ. Թոմասի՝ կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի նախահակվածության ախտորոշում, Վ. Ստոլինի, Լ. Ռոմանովի և Գ. Բուտենկոյի՝ ամուսնությունից բավարարվածության մակարդակի թեստ-հարցարան, Յու. Ալեշինայի, Լ. Գոզմանի, Ե. Դուբովսկայայի՝ դիրքորոշումների բացահայտումն ամուսնական զույգում, Յու. Ալեշինայի, Լ. Գոզմանի և Ե. Դուբովսկայայի՝ ընտանեկան դերերի բաշխումն ընտանիքում հարցարան, Ա. Վոլկովայի՝ դերային սպասելիքները և հավակնությունները ամուսնության մեջ հարցարան, Ե. Շեֆերի և Ռ. Բելլի՝ ընտանեկան կյանքի տարբեր կողմերի նկատմամբ ծնողների դիրքորոշումների մեթոդիկա PARI (parental attitude research instrument), Յու. Ալեշինայի և Լ. Գոզմանի՝ կոնֆլիկտային իրադրություններում ամուսինների փոխազդեցության բնույթը հարցարան: Իրականացվել են հոգեախտորոշիչ հետազոտություններ, տվյալների նկարագրական և

վիճակագրական վերլուծություն, համահարաբերակցային վերլուծություններ, տրվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Հետազոտության երկրորդ՝ **«Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն»** ենթագլխում ներկայացվել և վերլուծվել են կիրառված մեթոդիկաների տվյալները: Այդյունքում, պարզ է դառնում, որ երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային վարքը զգալիորեն կապված է նրանց ծնողների ամուսնական դերերի հետ: Փորձարարական խմբի տղամարդկանց մրցակցային և խուսափող վարքը նման է փորձարարական խմբի ծնողների տղամարդկանց վարքին, ինչը վկայում է վարքային օրինաչափությունների փոխանցման մասին: Կանայք երկու խմբերում ավելի կառուցողական են, սակայն փորձարարական խմբի կանայք ավելի շատ են հակված փոխզիջումների: Ստուգիչ խմբերում երկու սեռերն էլ ցուցաբերում են համագործակցային վարք:

Վ. Ստոլինի, Լ. Ռոմանովի և Գ. Բուտենկոյի՝ ամուսնությունից բավարարվածության մակարդակի ախտորոշման թեստի արդյունքների համաձայն երիտասարդ ամուսինների ամուսնությունից բավարարվածության մակարդակը կապված է նրանց ծնողների ամուսնական փորձի հետ: Փորձարարական խմբերում ցածր բավարարվածությունը (14.3-15.2) վկայում է կոնֆլիկտային վարքի (մրցակցություն, խուսափում) բացասական ազդեցության մասին, որը փոխանցվում է ծնողներից երիտասարդ զույգերին: Ի հակադրություն ստուգիչ խմբերում բարձր բավարարվածությունը (30-30.4) պայմանավորված է կառուցողական մոտեցմամբ (համագործակցություն, փոխզիջում), որը նպաստում է ներդաշնակ հարաբերություններին:

Ա. Վոլկովայի՝ դերային սպասելիքները և հավակնությունները ամուսնության մեջ հարցարանի արդյունքների համաձայն փորձարարական խմբերում կանայք և տղամարդիկ կենտրոնացած են ավանդական ընտանեկան դերերին (արտաքին գրավչություն, կենցաղ), սակայն ցածր սպասելիքները հուզական և սոցիալական դերերում վկայում են կոնֆլիկտային միջավայրի բացասական ազդեցության մասին: Ստուգիչ խմբերում բարձր և բազմակողմանի սպասելիքները արտացոլում են սոցիալ-հոգեբանական համատեղելիության բարձր մակարդակ: Այստեղ ծնողների դերային սպասելիքները զգալիորեն ազդում են երիտասարդ զույգերի ընտանեկան արժեքների ձևավորմանը:

Ե. Շեֆերի և Ռ. Բելլի ընտանեկան կյանքի տարբեր կողմերի նկատմամբ ծնողների դիրքորոշումների մեթոդիկայի PARI արդյունքների համաձայն փորձարարական խմբերում ավանդական արժեքները (գերհեղինակություն, կախվածություն) խոչընդոտում են ընտանեկան

ներդաշնակությանը՝ նպաստելով կոնֆլիկտների առաջացմանը: Ստուգիչ խմբերում ժամանակակից արժեքները նպաստում են սոցիալ-հոգեբանական համատեղելիությանը և կոնֆլիկտների բացակայությանը: Արդյունքներն ընդգծում են ծնողական ընտանիքի ազդեցությունը երիտասարդ զույգերի արժեքների վրա՝ ցույց տալով, որ ավանդական արժեքները կարող են խորացնել կոնֆլիկտները, իսկ ժամանակակիցները՝ նպաստել ընտանեկան ներդաշնակությանը:

Յու. Ալեշինայի և Լ. Գոզմանի՝ կոնֆլիկտային իրադրություններում ամուսինների փոխազդեցության բնույթը մեթոդիկայի արդյունքների համաձայն երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային վարքը և ամուսնությունից բավարարվածությունը սերտորեն կապված են ծնողական ընտանիքի մոդելների հետ: Կոնֆլիկտային երիտասարդ ու նրանց ծնողների ընտանիքներում ավանդական արժեքները և կոնֆլիկտային վարքը խորացնում են տարաձայնությունները՝ հանգեցնելով ամուսնությունից ցածր բավարարվածության: Համերաշխ երիտասարդ ընտանիքներում ու նրանց ծնողների մոտ հավասարության, հուզական աջակցության, համատեղ գործունեության արժեքները և կառուցողական մոտեցումը նպաստում են բարձր բավարարվածության և գրեթե կոնֆլիկտների բացակայությանը: Կոնֆլիկտային խմբերում դերային սպասումների անհամապատասխանությունն ու ավանդական նորմերի խախտումները խորացնում են լարվածությունը, մինչդեռ ոչ կոնֆլիկտային խմբերում առկա է ճկուն և հավասարակշռված մոտեցում:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ՝ «**Փորձարարական հետազոտության արդյունքների համահարաբերակցային վերլուծություն»** ենթագլխում ներկայացված է հետազոտության ընթացքում կիրառված մեթոդիկաների արդյունքում ստացված տվյալների հարաբերակցային վերլուծություն, ըստ որի երիտասարդ ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները կապված են ծնողների կոնֆլիկտային դերերին նույնականացման հետ, ինչն արտահայտված է փորձարարական խմբերում ($r=0.736$, $r=0.640$): Ոչ կոնֆլիկտային ընտանիքներում սերնդային նմանությունը գործնականում բացակայում է (թույլ՝ $r=-0.143$, $r=0.095$), ինչը կարող է վկայել պաշտպանական մեխանիզմների կամ արտաքին գործոնների ազդեցության մասին:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ փորձարարկան խմբերում բարձր համահարբերակցային գործակիցները վկայում են ավանդական դերային սպասելիքների ուժեղ միջսերնդային փոխանցումը, որը խորացնում է կոնֆլիկտները: Ստուգիչ խմբերում ցածր համահարբերակցության գործակիցները կամ դրանց բացակայությունը

ցույց են տալիս, որ երիտասարդ զույգերը ձևավորում են ավելի ինքնուրույն և ճկուն դերային սպասելիքներ, նպաստելով ներդաշնակությանը:

Երիտասարդ կոնֆլիկտային ամուսնական զույգերի և նրանց ծնողների խմբերում բարձր համահարաբերակցային գործակիցները վկայում են դիրքորոշումների ուժեղ սերնդային փոխանցումը, որը խորացնում է կոնֆլիկտները: Կանանց և տղամարդկանց միջև արդյունքների տարբերություններն ընդգծում են, որ կոնֆլիկտային խմբերում ավանդական արժեքներն ավելի ակնհայտ են, մինչդեռ կոնֆլիկտազուրկ խմբերում դրանք ավելի ճկուն են:

Աղյուսակ 1. Ե. Շեֆերի և Ռ. Բելլի՝ ընտանեկան կյանքի տարբեր կողմերի նկատմամբ ծնողների դիրքորոշումների մեթոդիկայի (PARI) 7-րդ սանդղակի և Յու. Ալեշինայի և Լ. Գոզմանի՝ կոնֆլիկտային իրադրություններում ամուսինների փոխազդեցության բնույթը հարցարանի (ԿԻԱՓԲ) 2, 4 և 5 սանդղակների միջև համահարաբերակցության մատրիցան (n=240) Acr=0,67082, Ecr=1,341641

Սանդղակներ	Aemp1	Eemp1	rs	p
ԿԻԱՓԲ №2	5,194	41,983	0,661	<0,01
ԿԻԱՓԲ №4	4,696	36,701	0,665	<0,01
ԿԻԱՓԲ №5	5,095	40,946	0,605	<0,01

Ստացված արդյունքները վկայում են, որ ընտանեկան կոնֆլիկտները սերտորեն կապված են զույգերի միջև համատեղ արժեքների և սպասումների բացակայության հետ: Դերային սպասումների խանգարումը, որպես կոնֆլիկտների ամենաուժեղ գործոն, ցույց է տալիս, որ զույգերը հաճախ պայքարում են իրենց դերերի վերաիմաստավորման համար: Դաստիարակության հետ կապված տարաձայնությունները նույնպես էական են, քանի որ դրանք հաճախ կապված են խորքային արժեքների և դաստիարակության մոդելների հետ, որոնք զույգերը ժառանգել են իրենց ծնողներից: Վարքի նորմերի տարաձայնությունները, թեև նպաստում են կոնֆլիկտներին, կարող են ավելի մակերեսային բնույթ ունենալ և ավելի հեշտ լուծվել երկխոսության միջոցով: Ընտանեկան կոնֆլիկտների մակարդակն անկախ ցուցանիշ չէ, այլ պայմանավորված է զույգերի փոխհարաբերությունների դինամիկայով, ինչը վկայում է, որ կոնֆլիկտները հաճախ համակարգային բնույթ ունեն և կարող են սերնդային փոխանցման արդյունք լինել:

Աղյուսակ 2. Յու. Ալեշինայի և Լ. Գոզմանի՝ կոնֆլիկտային իրադրություններում ամուսինների փոխազդեցության բնույթը հարցարանի և Վ. Ստոլինի, Լ. Ռոմանովի և Գ.

Բուտենկոյի՝ ամուսնությունից բավարարվածության մակարդակի թեստ-հարցարանի արդյունքների համահարաբերակցության մատրիցա (n=120), Acr=0,67082, Ecr=1,341641

Սանդղակներ	Aemp1	Eemp1	rs	p
ԿԻԱՓԲ №2	5,194	41,983	0,699	<0,01
ԿԻԱՓԲ №4	4,696	36,701	0,766	<0,01
ԿԻԱՓԲ №5	5,095	40,946	0,734	<0,01

Ստացված համահարաբերակցությունների վերլուծությունը հաստատում է, որ ամուսնական կյանքից անբավարարվածությունը սերտորեն կապված է զուգընկերների միջև դերային սպասումների խանգարումների, վարքային նորմերի շուրջ տարաձայնությունների և երեխայի դաստիարակության հարցերում տարբեր պատկերացումների հետ: Առավել ուժեղ կապը դերային սպասումների հետ վկայում է, որ զուգընկերների սպասումների անհամաձայնությունները կարող են լինել ամուսնական ճգնաժամերի հիմնական «դրդապատճառ»: Միաժամանակ, վարքային նորմերի և երեխայի դաստիարակության հարցերը նույնպես զգալի ազդեցություն ունեն անբավարարվածության վրա, ինչն ընդգծում է ամուսնական հարաբերությունների բարդությունը և բազմաբնույթ լինելը:

Աղյուսակ 3. ՓԽ-ում և ՓԽՇ-ում Ե. Շեֆերի և Ռ. Բելլի՝ ընտանեկան կյանքի տարբեր կողմերի նկատմամբ ծնողների դիրքորոշումների մեթոդիկայի (PARI) և Վ. Ստոլինի, Լ. Ռոմանովի և Գ. Բուտենկոյի՝ ամուսնությունից բավարարվածության մակարդակի թեստ-հարցարանի արդյունքների համահարաբերակցության մատրիցա (n=120), Acr=0,67082, Ecr=1,341641 (PARI-13 և PARI-20 n=60, Acr=0,948683, Ecr=1,897367)

Սանդղակներ	Aemp1	Eemp1	Aemp2	Eemp2	rs	p
PARI-3	0,203	-0,298	-0,364	0,087	-0,725	<0,01
PARI-7	0,203	-0,298	-0,201	-0,648	-0,814	<0,01
PARI-11	0,203	-0,298	-0,089	-0,401	-0,797	<0,01
PARI-13 (կ)	0,204	-0,195	-0,163	-1,891	-0,825	<0,01
PARI-20 (տ)	0,023	-0,691	-0,208	-1,804	-0,812	<0,01

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ ընտանեկան դիսֆունկցիան (կախվածություն, կոնֆլիկտներ, գերիսկողություն) և ավանդական դերերից դժգոհությունն ուժեղ բացասական կապ ունեն ամուսնական բավարարվածության հետ: Կանանց մոտ դժգոհությունը տնային դերերով, իսկ տղամարդկանց մոտ երեխայի անձնական տարածք մտնելու հակումն առանցքային խնդիրներ են, որոնք սրում են զույգերի հարաբերությունները:

Աղյուսակ 4. ՓԽ-ում և ՓԽԾ-ում Կ. Թոմասի՝ կոնֆլիկտային վարքի նկատմամբ անձի նախահակվածության ախտորոշում (ԿՎԱՆ) մեթոդիկայի սանդղակների և Վ. Ստոլինի, Լ. Ռոմանովի և Գ. Բուտենկոյի՝ ամուսնությունից բավարարվածության մակարդակի թեստ-հարցարանի արդյունքների համահարաբերակցային վերլուծության մատրիցա (n=60) (Acr=0,948683, Ecr=1,897367)

Սանդղակներ	Aemp1	Eemp1	Aemp2	Eemp2	rs	p
Մրցակցություն (տ)	0,023	-0,691	0,292	-1,674	-0,779	<0,01
Խուսափում (տ)	0,023	-0,691	0,288	-1,592	-0,781	<0,01
Հաշտություն (կ)	0,204	-0,195	0,041	-1,876	0,173	>0,1
Համագործակցություն (կ)	0,204	-0,195	0,184	1,974	0,156	>0,1

Կոնֆլիկտային խմբերի տղամարդկանց մոտ «Մրցակցություն» և «Խուսափում» որակների բարձր բացասական համահարաբերակցությունն ամուսնական բավարարվածության աստիճանի հետ ընդգծում է, որ մրցակցային և խուսափող վարքը կարևոր դեր է խաղում կոնֆլիկտների խորացման և բավարարվածության նվազման գործում: Էքսցեսի բացասական արժեքները ցույց են տալիս, որ այս վարքը տարածված է և կենտրոնացած է բաշխման կենտրոնում: Կանանց «Հաշտություն» և «Համագործակցություն» սանդղակների թույլ դրական համահարաբերակցությունը ցույց է տալիս, որ կառուցողական ջանքերը կոնֆլիկտային խմբերում արդյունավետ չեն՝ հաշվի առնելով տղամարդկանց վարքը:

Այսպիսով, ընտանեկան կոնֆլիկտները մի կողմից կարող են ցույց տալ ապահարմարողական գործընթաց, մյուս կողմից՝ դիտարկվել որպես դրական ցուցանիշներ, որոնք նպաստում են ամուսնության մեջ առավել արդյունավետ վարքային մոդելների ձևավորմանը: Յուրաքանչյուրն իր վրա է վերցնում նույն նորմերը հաջորդող սերունդներին փոխանցելու գործը: Ուստի զարմանալի չէ, որ ամուսինների միջև առկա կոնֆլիկտները, բազում սերունդների մոտ, գործնականում չի փոփոխել իր բնույթն ու դերային ուղղվածությունը:

Եզրակացություններ

1. Ծնողական ընտանիքը դիտարկվում է որպես սոցիալական խումբ, որն օժտված է որոշակի արժեքային համակարգով, հարաբերությունների մշակույթով, ընտանեկան կյանքի սցենարով, այդ ամենը ձևավորում է ընտանիքում մեծացող անձի կառուցվածքը, մոտիվացիան, սոցիալական հարաբերությունների մոդելը:

2. Ընտանեկան կյանքի որակը, ամուսնական հարաբերությունները պայմանավորվում են կոնկրետ էթնոընտանեկան մշակույթի ազդեցությամբ, ինչը փոխանցվում է սերնդից սերունդ՝ ամուսնական հարաբերություններին հաղորդելով կարծրատիպային բնույթ:

3. Կոնֆլիկտային ամուսնական հարաբերություններում տղամարդիկ առավել հակված են կնոջ մեջ տեսնել մայրական վարք, կանայք ընդունում են այն դերային սպասելիքները, որոնք նրանց վերագրվում են կոնֆլիկտներից խուսափելու համար: Ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները հաճախ պայմանավորվում են դերային սպասումների անհամապատասխանությամբ:

4. Ծնողների վարքի մոդելների հետ խորը նույնականացման, դրանց կրկնօրինակման հետևանքով երիտասարդ ամուսինները գործ ունենք հին մոդելների կրկնության հետ: Քանի դեռ չի ձևավորվել ամուսնական հարաբերություններում սեփական ընտանիքի մոդելը, ամուսինները հակված են կրկնել ծնողական ընտանիքների յուրացված վարքի նորմերը:

5. Ոչ կոնֆլիկտային ծնողական ընտանիքների հետ նույնացումը ձևավորում է նույն որակի ամուսնական հարաբերություններ: Սակայն, այս դեպքում էլ մենք հակված չենք համարել նման հարաբերությունները հոգեբանորեն լիարժեք, քանի որ այս դեպքում գործ ունենք նույնականացման հետևանքով ձևավորված վարքի մոդելի հետ, չնայած այն հանգամանքին, որ այս մոդելն արդեն սոցիալապես պահանջվող է համարվում հասարակության արժեքային համակարգում:

6. Երիտասարդ ամուսինների փոխհարաբերություններում սոցիալական մոդելները վերարտադրվում են: Այս հանգամանքը թույլ է տալիս պնդել, որ ամուսնական կոնֆլիկտները կամ տարաձայնությունները պետք է սահմանվեն որպես յուրացված մոդելների կրկնություն, որպես մերձամուսնական խնդիրներ:

7. Երիտասարդ ամուսինները միջսերնդային ամուսնական կյանքի սցենարի կրողն են, և այդ սցենարն իրականացնողները: Արդյունքում, ամուսնաընտանեկան հարաբերություններում ձևավորվում է հետաքրքիր սոցիալ-հոգեբանական երևույթ, գործ ունենք ամուսնական դերերի հետ, չունենալով դրա անհատական դերակատարումը: Նույնը վերաբերվում է ոչ կոնֆլիկտային երիտասարդ ամուսիններին, նրանք ևս առաջնորդվում են նույնականացված սցենարով և այդ սցենարի սահմաններում ցուցաբերում ամուսնական կյանքի բավարարվածության բարձր մակարդակ, նրանք երջանիկ են նույնականացված սցենարի արդյունքում:

8. Ամուսինների փոխհարաբերություններում մրցակցության և խուսափման դիրքորոշումների գործակցության դեպքում հարաբերություններում պակասում է միմյանց հասկանալու ձգտումը, էմպատիան, տղամարդիկ ուղղակի փորձում են ապացուցել իրենց գերակայությունը կնոջ նկատմանբ, նրանք ներքին պահանջմունք ունեն հրահրելու կոնֆլիկտներ, դրա միջոցով հասնելու ինքնահաստատման:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Սարհատյան Ն.Ա. Ընտանեկան դերերի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, Արդի հոգեբանության. տեսական և կիրառական հիմնախնդիրներ: Գիտական հոդվածների ժողովածու, Եր.-2012, 2, էջ 227-233:

2. Սարհատյան Ն.Ա. Միքայելյան Վ.Հ. Ընտանեկան հարաբերությունների պատմական զարգացումը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ԱԿՈՒՆՔ գիտական հոդվածների ժողովածու, Երևան - 2017, 1 (15), էջ 206-214: ISSN 1829-2992

3. Սարհատյան Ն.Ա. «Ամուսնություն» և «ընտանիք» հասկացությունները որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ԱԿՈՒՆՔ գիտական հոդվածների ժողովածու, Երևան - 2017, 1 (15), էջ 215-223: ISSN 1829-2992.

4. Սարհատյան Ն.Ա. Երիտասարդ ընտանիքներում ամուսնական կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական պատճառները. գիտամեթոդական մոտեցումները, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» հայ-ռուսական միջազգային համալսարան, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» մեթոդական հոդվածներ, Վանաձոր-2017, 1 (46), էջ 112-117:

5. Սարհատյան Ն.Ա. Ընտանեկան դեզադապտացիայի հոգեբանական պատճառների մեթոդաբանական սկզբունքները, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» հայ-ռուսական համալսարան, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» մեթոդական հոդվածներ, Վանաձոր-2017, 1 (46), էջ 118-124: ISSN 1829-3085

6. Սարհատյան Ն.Ա. Ընտանեկան ճգնաժամերը որպես արտակարգ սոցիալական երևույթ, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա, ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Գիտական գիտամեթոդական հոդվածների ժողովածու, Երևան-2017, (12), էջ 243-247:

7. Սարհատյան Ն.Ա. Ամուսնական փոխհարաբերությունների զարգացման ճգնաժամային շրջանների հոգեբանական առանձնահատկությունները, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ԱԿՈՒՆՔ գիտական հոդվածների ժողովածու, Երևան-2018, 1 (18), էջ 267-276: ISSN 1829-2992

8. Սարհատյան Ն.Ա. Ընտանիքի գործառույթները որպես սոցիալ-հոգեբանական կատեգորիա, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» հայ-ռուսական միջազգային համալսարան, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» գիտամեթոդական հոդվածներ, Վանաձոր-2019, 2, էջ 253-262: ISSN 1829-3085

9. Սարհատյան Ն.Ա. Ընտանեկան ճգնաժամեր, նորմեր և շեղումներ, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» հայ-ռուսական միջազգային համալսարան, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» մեթոդական հոդվածներ, Վանաձոր-2019, 2, էջ 263-271:

10. Sargsyan L., Sarhatyan N. The Interrelation between Young Spouses' Interaction in Conflict and Their Parents' Attitudes toward Family Life. KATCHAR /Academia social science periodical, 2, Yerevan 2025. p. 10-19. DOI: 10.54503/2579-2903-2025.2-10

САРГАТЯН НАИРА АЛЬБЕРТОВНА
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОНФЛИКТОВ В МОЛОДЫХ СЕМЬЯХ

Диссертация на соискание учёной степени кандидата психологических наук по специальности 19.00.03 «Социальная психология». Защита диссертации состоится 24-го февраля 2026 года в 12^{00} на заседании специализированного совета 064 КВОН при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, Тигран Меци 17).

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Актуальность темы заключается в том, что в социальной жизни общества, которое находится на переходном этапе, современные молодые семьи, часто сталкиваются с противоречием между традиционными и современными ценностями, что приводит к ролевым несоответствиям. В нашей среде, где семья считается основным носителем национальных и культурных ценностей, подобные противоречия могут привести к нарушению семейной стабильности. Молодые супруги, стараясь учитывать традиционные модели родительской семьи, одновременно стремятся принять современные подходы. Этот процесс нередко сопровождается внутренними и внешними напряжениями, усиливающими супружеские конфликты. С этой точки зрения сравнительно мало исследований, в которых объектом анализа является роль родительского влияния на формирование супружеских ролей мужчин и женщин.

Цель исследования: выявление влияния родительских образов на конфликты в молодых семьях.

Основные задачи исследования:

1. Проанализировать брак и семью как социально-психологическое явление, раскрыть сущность понятий «брак» и «семья» как систем социальных структур и психологических взаимоотношений.
2. Уточнить функции семьи (в психологическом аспекте) и уровни супружеских кризисов, нормативные и патологические проявления семейных кризисов в связи с социальными ожиданиями и индивидуальной адаптацией.
3. Охарактеризовать психологические особенности кризисных этапов развития супружеских отношений.
4. Определить психологические факторы семейной дезадаптации.
5. Выявить основные социально-психологические причины супружеских конфликтов в молодых семьях.
6. Сравнить и оценить результаты конфликтных и неконфликтных групп, а также влияние поведенческих моделей родительской семьи на отношения молодых супругов.

7. Проанализировать корреляционные данные между идентификацией с родительскими ролями, удовлетворённостью браком и конфликтностью.

Гипотеза исследования: предполагается, что конфликтные отношения молодых супругов обусловлены идентификацией с супружескими ролями родителей и носят групповой, а не индивидуальный характер.

1. Конфликтные отношения супругов неизбежны, если они проистекают из идентификации с конфликтными супружескими ролями родителей.
2. Удовлетворённость браком молодых супругов определяется степенью удовлетворённости браком их родителей.

Научная новизна исследования: заключается в том, что проведён анализ обусловленности конфликтных отношений в молодых семьях в контексте влияния родительских супружеских моделей. Выделены типы реакций конфликтных и неконфликтных молодых семей в конфликтных ситуациях, выявлена связь типа реагирования на конфликтные отношения со степенью удовлетворённости браком.

Теоретическая и практическая значимость исследования: разработана проблема конфликтных отношений молодых супругов в области психологии семьи, их взаимосвязь с поведенческими моделями родительских семей. Определена специфическая природа усвоенных конфликтных отношений у молодых супругов. С теоретической точки зрения работа имеет существенный вклад в развитие психологии семьи.

Прикладное значение исследования определяется новыми методологическими возможностями диагностики конфликтных отношений молодых супругов и высокой степенью прогноза конфликтного поведения. Практическая ценность диссертации заключается в разработке новых подходов к прогнозированию супружеских конфликтов в психологии семьи, что позволит создать новые возможности профилактики конфликтных отношений, а также их применения в психологическом консультировании, психотерапии и сопровождении семьи.

Надежность и публичность исследования обеспечиваются анализом 130 научной работы современных ученых. Результаты диссертации были представлены в 10 научных публикациях и обсуждались на кафедре психологии имени академика М. Мазманяна АГПУ.

Структура диссертации: Работа состоит из введения, трёх глав, выводов и рекомендаций, списка использованной литературы и приложений.

SARHATYAN NAIRA ALBERT

SOCIO-PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF CONFLICTS IN YOUNG FAMILIES

Dissertation for the Degree of Candidate of Psychological Sciences in the specialty 19.00.03 - "Social Psychology". The dissertation defense will take place on February 24, 2026, at 12:00, at HESC 064 Degree-awarding Scientific Council session, at the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan (17 Tigran Mets, 0010, Yerevan).

ABSTRACT

The relevance of the research The relevance of the topic is determined by the fact that in the social life of modern society, young families, being in a transitional stage, often face a clash between traditional and modern values, which leads to role inconsistencies. In our context, where the family is considered the main bearer of national and cultural values, such clashes may result in the disruption of family stability. Young couples, while trying to take into account the traditional models of their parental families, at the same time strive to adopt modern approaches. This process is often accompanied by internal and external tensions that intensify marital conflicts. From this perspective, there are few studies that have examined the role of parental influence in shaping the marital roles of men and women.

The aim of the study is to reveal the influence of parental role models on conflicts among young married couples.Research Objectives:

Main Objectives of the Study:

1. To analyze marriage and family as socio-psychological phenomena, and to explore the essence of the concepts of “marriage” and “family” as systems of social structures and psychological relationships.

2. To clarify the functions of the family (in psychological aspects) and the different levels of marital crises, as well as the normative and pathological manifestations of family crises in relation to social expectations and individual adaptability.

3. To interpret the psychological characteristics of the critical stages in the development of marital relationships.

4. To determine the psychological factors contributing to family maladjustment.

5. To reveal the main socio-psychological causes of marital conflicts in young families.

6. To compare and evaluate the results of conflict-prone and non-conflict groups and to assess the impact of parental family behavioral models on the relationships of young spouses.

7. To analyze the correlational data obtained between parental role identification, marital satisfaction, and conflicts.

Research Hypothesis:

It is assumed that the conflictual relationships of young spouses are determined by the identification with their parents' marital roles and are characterized by a group, rather than an individual nature.

1. Marital conflicts between spouses are inevitable if they stem from identification with their parents' conflictual marital roles.

2. The marital satisfaction of young spouses is determined by the degree of marital satisfaction observed in their parents' relationship.

The novelty of the research consists in analyzing the determinants of conflictual relationships in young families within the context of parental marital influences. The study identifies the types of reactions exhibited by conflictual and non-conflictual young families in conflict situations and reveals the relationship between the type of response to marital conflict and the degree of marital satisfaction.

Theoretical and Practical Significance of the Research:

The research addresses the issue of conflictual relationships among young spouses within the field of family psychology, examining their interconnection with the behavioral models of parental families. The study explores the acquired nature of conflictual relationships among young couples, thereby making a significant theoretical contribution.

The practical significance stems from the new methodological possibilities for diagnosing conflictual relationships among young spouses and, on this basis, achieving a higher level of accuracy in predicting conflict behavior.

The applied value of the dissertation consists in introducing new approaches to the anticipation of marital conflicts within family psychology. These approaches can serve as a basis for developing new strategies for the prevention of marital conflicts and for their application in psychological counseling, psychotherapy, and family guidance practices.

Reliability and Publicity of the Research:

The reliability of the study is ensured by the analysis of 130 scholarly works by contemporary researchers. The dissertation findings have been published in 10 academic articles and discussed at the Department of Psychology named after Academician M. Mazmanyan at ASPU.

Structure of the Dissertation:

The work consists of an introduction, three chapters, conclusions and recommendations, a list of references, and appendices.